ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աշակերտների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը հարցադրումների միջոցով

Անցկացման վայր՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Լիլիթ Բաղալյան

Դպրոց՝ Վարդենիկի Ռ.Հովհաննիսյանի անվան թիվ 1 հիմնական

Բովանդակություն

1.Ներածություն……3

2.Գրական ակնարկ……5

3.Փորձարարական հետազոտություն……13

3.1.Խմբի նկարագիրը…… . . . 13

3.2.Փորձարարական դասեր…… . . . 14

3.2.1.Փորձարարական դաս-1……14

3.3.2.Փորձարարական դաս-2……15

4.Վերլուծություն…… 16

5.Գրականության ցանկ……17

6.Հավելված…… . 18

1.Դասապլան-1……18

2.Դասապլան-2……23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի ձևավորելու որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի: Մայրենի լեզվի դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի ,հայ քաղաքացու արժեհամակարգի ,նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում:Սովորողը մայրենի լեզվից որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման,հաղորդակցման և համագործակցության,որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու միջոց:Մայրենի լեզվի ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու,ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար,ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը,ժողովրդի կենցաղը,ավանդույթները:Ազգային ոգին և մշակույթը արժևորելու ,պահպանելու և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր,բարեկիրթ,ներդաշնակ զարգացած,ստեղծագործ անձնավորություն:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման խնդիրը ուսուցման գործընթացի հիմքն է հանդիսանում , որը ժամանակի ընթացքում չի կորցնում իր

արդիականությունը՝ պահանջելով մշտական, սերտ ուշադրություն և հետագա զարգացում: Այսօր հասարակության մեջ հատկապես կարիք կա այն մարդկանց, ովքեր նախաձեռնող են, ստեղծագործ, պատրաստ են գտնել նոր մոտեցումներ սոցիալ-տնտեսական և մշակութային հրատապ խնդիրների լուծման համար, որոնք կարող են ապրել նոր ժողովրդավարական հասարակությունում և օգտակար լինել այս հասարակությանը: Այս առումով այսօր առանձնահատուկ արդիականություն է ձեռք բերում անհատի ստեղծագործական գործունեության զարգացման խնդիրը: Ստեղծագործ անհատականությունները բոլոր ժամանակներում որոշում էին քաղաքակրթության առաջընթացը՝ ստեղծելով նյութական և հոգևոր արժեքներ: Բայց հենց այսօր է, որ կրթական գործընթացը բախվում է տարրական դպրոցից սկսած՝ ստեղծագործական անհատականություն կրթելու խնդրին: Այս խնդիրն արտացոլվում է այլընտրանքային կրթական ծրագրերում, ժամանակակից դպրոցում տեղի ունեցող նորարարական գործընթացներում: Ստեղծագործական գործունեությունը զարգանում է ստեղծագործական բնույթ ունեցող գործունեության գործընթացում, ինչը սովորողներին ստիպում է սովորել և զարմանալ, լուծում գտնել ոչ ստանդարտ իրավիճակներում: Հետևաբար, այսօր մանկավարժական գիտության և պրակտիկայում առկա է ուսուցման նոր, ոչ ստանդարտ ձևերի, մեթոդների և տեխնիկայի ինտենսիվ որոնում: Դասերի ոչ ավանդական տեսակները, խնդրի ուսուցման մեթոդները, արտադասարանական աշխատանքում հավաքական ստեղծագործական գործունեությունը, որոնք նպաստում են կրտսեր սովորողների ստեղծագործական գործունեության զարգացմանը:Իրականացվել են տարրական դասարանների աշակերտների ստեղծագործական գործունեության զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրություններ Վիգոտսկի,Տ.Լ. Ռուբինշտեյն, Շ.Ա. Ամոնաշվիլի, Գ.Ի. Շչուկինա, Վ.Ն. Դրուժինին, Վ.Դ. Շադրիկովա, Ի.Ֆ. Խառլամովը և ուրիշների կողմից: Տարրական դպրոցականների ստեղծագործական գործունեության

զարգացման տարբեր միջոցների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում մայրենի լեզվի դասերը և տարրական դասարանների ընթերցանությունը:

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ սովորողների ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար: Սույն աշխատանքը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Հետազոտության օբյեկտ. Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացում:

Հետազոտության առարկա ՝ ընթերցանության դասերին տարրական դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացը:

Հետազոտության վարկած. Ընթերցանության դասերին կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը արդյունավետ կլինի, եթե.

- **Ստեղծվի իսկապես ստեղծագործ մթնոլորտ, որը կնպաստի երեխայի ստեղծագործական մտածողության ազատ դրսևորմանը:**
- **Ապահովվի կրտսեր դպրոցականների ընդգրկումը ստեղծագործական գործունեության մեջ:**
- **Իրականացվի ստեղծագործական ունակությունների զարգացման ձևերի և մեթոդների ընտրություն.**

  Կրտսեր դպրոցականների մոտ տեղծագործական ունակութունների զարգացման համար կկիրառեմ հարցադրումների մեթոդը :

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում: Պարզվել է, որ վերջին 15 տարիների ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչները մեծամասամբ տվել են սխալ հարցեր՝ կենտրոնանալով ոչ թե ուսումնառությունն առաջ մղող, այլ սովորողի տիրապետած որոշակի տեղեկույթը վերհանող հարցադրումների վրա: Աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու,ստեղծագործական ունակությունները զարգացնելու,քննադատական մտածողությունը զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ: Պատմության մեջ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների

կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը: Աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների մի քանի ռազմավարություններ, որոնք կարող են նպաստել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածության մեծացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

1.Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն: Սա այն մոտեցումն է, երբ ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Ամենայն հավանականությամբ, սա ամենատարածված մեթոդներից մեկն է, որի շրջանակում տրվող հարցերը հիմնականում նպատակ ունեն պարզելու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել, թե որքանով են աշակերտներն ընկալել ուսուցանվող նյութը: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Ավելին, հաստատվեց նաև Գալլի այն տեսակետը, որ որքան ավելի շատ հարցադրումներ են հնչում, այնքան ավելի պակաս աշակերտներ են մասնակցում դասին:

Ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը:

Հարցերի ճիշտ ընտրությունը և դրանց ճիշտ ձևակերպումն էականորեն կարող են փոխել վերջնական արդյունքը: Եթե

հարցադրման սկզբում դասին ներգրավված էին ընդամենը 3 –5 աշակերտ, ապա հարցերի ձևափոխման արդյունքում դասին ակտիվորեն մասնակցում էր գրեթե ողջ դասարանը:

2.Հարցական բառերի ռազմավարություն: Այս մեթոդը կիրառվում է, երբ աշակերտներն արդեն ծանոթ են թեմային: Առաջարկվում է աղյուսակ կազմել, որի ձախ կողմում պետք է գրել հարցական բառերի մի ամբողջ շարք, իսկ աջ կողմում՝ թեմային առնչվող հասկացություններ: Այնուհետև օգտագործելով երկու աղյուսակների գրառումները՝ կազմել հնարավորինս շատ հարցեր, քննարկել առաջարկված հարցերից 3-4 հարց, որոնք առավել հետաքրքիր են աշակերտների համար:

Օրինակ, <<Հայկ և Բել>> դասի ուսումնասիրման ժամանակ ստեղծվել է աղյուսակի այսպիսի տարբերակ (աղյուսակ 1.)

Հարցական բառեր	**Հիմնական տերմինները**
Ինչպե՞ս, Որտե՞ղ, Ինչու՞,	**Հարցերի միջոցով,երկնքում,աստված է**
	Հայկ

Ո՞վ,Ովքե՞ր	նահապետը,որդիները,Բելը,զորքը
Ե՞րբ, Որքա՞ն	Շատ ու շատ դարեր առաջ,մեծաքանակ,անթիվ-անհամար
Ու՞մ միջև	Հայկի և Բելի

Օգտագործելով աղյուսակի ձախ սյունի հարցական բառերը և աջ սյունի հասկացությունները՝ սովորողները կազմեցին հարցեր: Հարցերի կազմման գործընթացին մասնակցեցին բոլոր աշակերտները: Դասի երրորդ հատվածում պարզաբանվեցին ընտրված 3 կարևորագույն հարցերը ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ:

3.Պատասխանում են անվանակոչվածները : Այս ռազմավարության շրջանակում անվանակոչվում է աշակերտի հստակ անուն, որ պատասխանում է հարցին այն հնչեցնելուց հետո: Սա այն եզակի ռազմավարություններից է, որի կիրառությունն ապահովում է գրեթե բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ դասին մասնակցում են գրեթե բոլոր աշակերտները՝ անկախ իրենց առաջադիմությունից: Յուրաքանչյուրը մասնակցում է իր չափով, և այս պարագայում խրախուսվում է ցանկացած հաջողություն, անգամ ամենափոքրը: Ավելին, եթե աշակերտի կողմից տրված պատասխանը այն չէ, ինչ ակնկալվում է, ապա ոչ թե պետք է հարցն ուղղել այլ աշակետի, այլ պատասխանող աշակերտին օգնել վերաձևակերպել

պատասխանը: Դասերի ընթացքում անհրաժեշտ է կիրառել մոտեցումներ, որոնք օգնում են «ջերմացնել» այսպես կոչված «սառը անվանակոչման» ռազմավարությունը: Ստորև ներկայացնենք դրանցից հիմնականները.

•Նախապես զգուշացրե՛ք աշակերտներին, որ մեծապես խրախուսվում է դասին մասնակցությունը: Յուրաքանչյուր աշակերտին տվե՛ք ձևավորող գնահատական:

• Աշակերտներին տալ ժամանակ, որ նրանք պատրաստեն իրենց հարցերը, ինչպես նաև անդրադարձ կատարեն հետաքրքրող հարցերին:

• Պետք է կարողանալ հմտորեն կառավարել ողջ պրոցեսը և աջակցել աշակերտներին, որ նրանցից յուրաքանչուրն իր հնարավորության չափով ներգրավվի դասին:

• Օգտագործե՛ք բաց հարցեր և օգնե՛ք աշակերտին հանգել ճիշտ պատասխանի:

• Չափազանց կարևոր է հոգեբանական ապահով միջավայրի ստեղծումը: 4.Վեց W-երի ռազմավարությունների ռազմավարություն :Ժամանակակից մանկավարժության մեջ մեծ տարածում է գտել այսպես կոչված «Վեց W-երի» ռազմավարությունը: Գերմաներենում հիմնական 6 հարցերը՝ ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, սկսվում են նույն՝ W տառով: Թեմայի ավարտից հետո սովորողները զույգերով երկխոսություն են վարում՝ փորձելով պարզել, թե ինչ է տվել իրենց տվյալ թեմայի ուսումնասիրությունը: Ասենք՝ «Ինչո՞ւ սովորեցիր այս թեման», «Ի՞նչ տվեց այն քեզ», «Որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս կարող ես կիրառել ստացած գիտելիքները» և այլն: Քննարկվել է խնդիր, որի լուծման արդյունքում սովորողները ստացած գիտելիքները կիրառել են անծանոթ իրադրությունում:

5.Պատասխանին սպասելու ժամանակ բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավածությունը բարձրացնելու համար: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները.

- **Սովորողների պատասխաններն ընդարձակվում են:**

•Ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում:

• Հայեցողական մտածողության դրսևորում:

•Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը:

•Ուսուցիչները վերանայում են սովորողներից ունեցած ակնկալիքները:

•Անցում ուսուցչակենտրոն ուսուցումից սովորող-սովորող վարքի դրսևորումներին և ընդլայնում են հարցերի շրջանակը: Այսպիսով՝ ուսուցչի սպասման ժամանակի ավելացումն ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է մտածողության բարձր մակարդակներով արդյունավետ հարցերի համար: Սովորողները ևս օգտագործում են սպասման ժամանակն ավելի ամբողջական պատասխաններ ձևակերպելու համար:

6.Հարցերի շղթայի մեթոդ : Լինում են դեպքեր, երբ բարդ հարցերը տեղին չեն՝ առանց նախապես ամրապնդելու գիտելիքային հիմքը: Օրինակ՝ ներածական դասընթացում ավելի պարզ հարցեր են պահանջվում: Ինտեգրատիվ դասընթացների ընթացքում ուսուցիչը արագորեն պետք է անցնի ավելի բարդ հարցերի, ավելի պարզ հարցեր տալուց հետո՝ ուղղված նախնական գիտելիքների պաշար ձևավորելու համար: Հարցերի ցանկը պետք է տարբերվի՝ կախված դասընթացի բովանդակությունից և նպատակներից:Հարցերի շղթայի մեթոդը աշակերտներին մակերեսային պատասխաններից տանում է դեպի խորը քննարկումներ: Ավելին, աշակերտների կողմից հարցերին տրված պատասխանները, անկախ այն բանից, թե դրանք որ մակարդակի հարցեր են, վկայում են այն մասին, որ աշակերտները հստակ ըմբռնել են հարցը և գիտեն, թե խոսքը կոնկրետ ինչի մասին է:

Այսպիսով, չափից շատ հարցերի օգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության: Դա կարող է հանգեցնել աշակերտներին չմասնակցելու քննարկումներին, այն կարող է առաջացնել վախի և հարցաքննության զգացողություն: Այսպիսով, բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունեցող տեխնիկաներից մեկը սպասելու ժամանակն է, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, և հետագա երկխոսության առաջացման վրա: Եվ այսպես հարցադրումների մեթոդը ուսուցման հզոր ռազմավարություն է: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունները ուսումնառության մեջ առանցքային դեր ունեն: Ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները շարժում են սովորողի հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը, մղում վերլուծական անդրադարձի, օգնում սովորողներին յուրովի իմաստավորել ուսումնասիրվող գաղափարները, համադրել սովորածը և կատարել ընդհանրացումներ

ՈՒսումնական գործընթացի կազմակերպման առումով շատ կարևոր է նաև հարցեր տալու հմտությունը :Կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնել, այլև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը , որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից :

Հարցերը պետք է լինեն `

1. **Հստակ**

2. Նպատակաուղղված

3. Հակիրճ

4. Տեղին

5. Աշակերտների մակարդակին համապատասխան

6. Տրամաբանական հաջորդականությամբ

7. Մտածելու տեղիք տվող

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ.

- Բաց: Սովորաբար սկսվում են <<Ի՞նչ >>, <<Ինչպե՞ս>> հարցերով: Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան :
- Փակ: Արտահայտվում է մեկ բառով պարզապես <<այո>> կամ << ոչ>>
- Ենթատեքստով: << Դուք համաձայն եք ,որ Y-ը ավելի հետաքրքիր է քան ՝ X-ը կամ դուք հավանաբար կսխալվեք ,եթե ընտրեք Z տարբերակը >> և այլն :
- Հետադարձ : Ճշգրտվում է նյութի ընկալումը ,աշակերտների զրույցի մեջ ընդգրկված լինելը նրանց պատասխանները զարգացնելու կամ հետագա քննարկումը խրախուսելու և շարունակելու նպատակով :
- Հուշող: «Չե՞ք կարծում արդյոք, որ ...» , « Մի՞թե դուք կարծում եք ,որ ...»;
- Ուղղորդող : «ի՞նչ նոր հասկացությունների հանդիպեցինք այս թեման ուսումնասիրելիս» :

https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf

https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.html

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Սույն հետազոտական աշխատանքն իրականացվել է Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի Ռ.Հովհաննիսյանի անվան թիվ 1 հիմնական դպոցում:

Հետազոտական աշխատանքն իրականացվել է վերոնշյալ դպրոցի 3-րդ դասարանում,որտեղ սովորում են 11 աշակերտ ՝ 5 աղջիկ և 6 տղա:

Մայրենի առարկան այդ դասարանում դասավանդվում է շաբաթական 8 դասաժամով , դասացուցակով բաշխված է շաբաթվա բոլոր օրերի առաջին ,երկրորդ դասաժամերին :

Դասարանում սովորում են և՛ ուժեղ, և՛ միջին ընդունակություններով օժտված երեխաներ:Հետազոտական աշխատանքում ներգրավվել են բոլոր աշակերտները ,որոնք ունեն կարողությունների և հմտությունների տարբեր մակարդակներ :

Աշակերտներից մեկը՝ Պ.Ա-ն ակտիվ,աշխույժ ու շատախոս է,այդ պատճառով ակտիվ մասնակցություն չի ունենում ,ուշադրությունը չի կենտրոնացնում,շեղում է մյուսների ուշադրությունը,սիրում է լինել ուշադրության կենտրոնում,մասնակցում է դասին միայն այն ժամանակ,երբ պատասխանողի դերում է:Երբ մասնակցում է դասին,տալիս է ճիշտ,խելացի,տրամաբանական պատասխաններ:Իսկ Ք.Մ-ն և Ա.Ա-ն ունեն ընդունակությունների

միջին մակարդակ , մայրենիի դասերից գնահատվում են 7,8 երբեմն՝ 9:

Այսպիսով , առաջին հետազոտական աշխատանքն իրականացվել է 3-րդ դասարանում ,այդ օրվա դասը «Հայրենի՛ք,ես մի զարկն եմ քո բազկի»թեմատիկ խմբից «Հայկը և Բելը» թեման էր:Այդ թեմային ըստ թեմատիկ պլանավորման հատկացված է 3 դասաժամ:Իսկ երկրորդն՝ <<Հայոց հրաշքը՝Մեսրոպ Մաշտոց>> թեման էր,որին հատկացված է 2 դասաժամ:

ՈՒստի ,դասի նկատմամբ աշակերտների մոտիվացիան բարձրացնելու համար , կիրառվել է հարցադրումների մեթոդը:

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր «Հայկը և Բելը» (տե՛ս դասապլան-1 էջ՝ 18): Քանի որ նոր նյութի հաղորդման դաս էր, դասաժամն սկսվեց նոր նյութի հաղորդմամբ:Կազմակերպվեց «Արձանի կամ նկարի կենդանացում» խաղը,քանի որ աշակերտները Հայկ նահապետի մասին որոշակի գիտելիքներ արդեն ունեին:Խաղի նպատակն էր ՝ բանավոր կապակցված խոսքի զարգացում,երևակայության ,ստեղծագործական կարողությունների խթանում:Աշակերտները դերային խաղի միջոցով խոսեցին Հայկ նահապետի մասին:Առաջին դեմքով պատմեցին ՝ո՞վ է Հայկը,ի՞նչ կապ ունի հայերի հետ:Այնուհետև հանձնարարվեց լուռ ընթերցել դասանյութը,հարցեր առաջարկվեց նախնական ընկալումն պարզելու նպատակով:Պարզվեց,որ նրանք այնքան էլ լավ չէին ընկալել դասանյութը:Իրականացվեց տեքստի բարձրաձայն ընթերցում հատվածաբար,յուրաքանչյուր հատվածին համապատասխան առաջարկվեց հարցեր:Աշակերտները ճիշտ վերլուծեցին ու մեկնաբանեցին,եզրահանգումներ կատարեցին:Աշակերտների ստեղծագործական կարողությունները զարգացնելու նպատակով

առաջադրվեց հետևյալ հարցը՝<<Հետաքրքիր է,ի՞նչ զրույց է ծավալվել Հայկի և Բելի միջև մինչև ճակատամարտը,որի մասին չի գրել հեղինակը…Պատկերացրե՛ք և ներկայացրե՛ք նրանց զրույցը>>:Հետազոտվող աշակերտները հետաքրքիր տարբերակներ ու վարկածներ ներկայացրեցին,սակայն իրենց խոսքը և ձևակերպումները այնքան էլ գեղեցիկ ու ճիշտ չէին:Աշակերտներին հանձնարարվեց նաև կատարել դասագրքի առաջադրանք 1-ը,նրանք տրված հատկանիշները պետք է վերագրեին Հայկին ու Բելին:Նրանք եկան այն եզրահանգման,որ հատկանիշ ցույց տվող բառերը պատասխանում են ինչպիսի՞ հարցին:Անդրադարձ կատարվեց դասանյութի ամփոփիչ մտքին:Նրանք հասկացան ու պատասխանեցին ,թե ինչու՞ են մեզ հայ անվանում,մեր երկիրը՝Հայաստան,մեր լեզուն՝ հայերեն:Դասի ավարտին բաժանվեց ելքի քարտեր,հատկապես հետազոտվող միջին առաջադիմություն ունեցող աշակերտները հարցերին պատասխանել էին հետաքրքիր ձևով:Քանի որ Պ.Ա-ն,Ք.Մ-ն և Ա.ա-ն ակտիվ մասնակցություն ունեցան այս դասին նրանք գնահատվեցին՝8: Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:Որպես տնային աշխատանք հանձնարարվեց <<Հայկը և Բելը>> դասը /էջ 82/ սովորել վարժ ու սահուն կարդալ,կատարել առաջադրանք 3-ը:

Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր <<Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց>> (տես դասապլան- 2,էջ 23) : Հին թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով : Նախօրոք մշակված հարցադրումների միջոցով անվանակոչված աշակերտերին տրվեցին հարցեր :Փակ ,Բաց,Հուշող: Անվանակոչված աշակերտներից ոչ բոլորը կարողացան պատասխանել հարցերին :Այնուհետև հնչեցվեց հետադարձ և ուղղորդող հարցադրումներ, աշակերտները հարցերին

պատասխանում էին մեծ ոգևորությամբ: Այնուհետև անդրադարձ կատարելու համար կիրառվեց <<3-2-1>>հնարը: Աշակերտներից մեկը կարողացավ անթերի լրացնել քարտը ,մյուս երկուսը ունեին որոշ թերություններ ձևակերպումների հետ կապված ,նրանց բաց թողած սխալները , իմ թույլտվությամբ փորձեցին տեղից պատասխանել անվանակոչված աշակերտները:Նախորդ դասին անդրադարձ կատարելուց հետո աշակերտները խաղի միջոցով ծանոթացան նոր հերոսի հետ, ներկայացվեց նոր ուսուցանվող դասը : Հարցադրումների միջոցով ստուգվեց աշակերտների գիտելիքները նոր յուրացված դասից : Աշակերտների ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով հանձնարարվեց գրել փոքրիկ նամակ տառ-զինվորներին:Հետազոտվող աշակերտներից Ք.Մ-ն որոշ դժվարություններ ունեցավ նամակը գրելուց:Նրան օգնեցին նամակը գրել իմ ուղղորդող հարցերը:Իսկ մյուսները հետաքրքիր մտքեր էին գրել ու շնորհակալական խոսքեր գրել տառ-զինվորներին:Գնահատվեցին այն աշակերտները ովքեր ակտիվ մասնակցել էին դասին ,գնահատվեցին նաև պասիվ աշակերտները `ըստ իրենց գիտելիքների :Դասը ամփոփվեց<<Հարց,պատասխան>> աղյուսակը լրացնելու միջոցով: Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարմամբ :

4. Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու և ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար՝ անցկացվեց 2 փորձարարական դաս, որի ժամանակ 3 միջին առաջադիմություն ունեցող աշակերտներին տրվեցին հարցեր ՝ Փակ , Բաց, Հուշող, Ենթատեքստով, Հետադարձ և Ուղղորդող :Դասերի

ընթացքում կիրառվեցին բազմաթիվ մեթոդներ ,այդ թվում աղյուսակների կազմում,պատմության հորինում,նամակի ստեղծում, որում ներգրավված էին հետազոտվող աշակերտները : Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը և ստեղծագործական ունակությունների զարգացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցման մեթոդների կիրառում դասաժամերին

3.տարբերակված առաջադրանքների լուծում և քննարկում

4.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով:

6. Համացանցից լրացուցիչ նյութերի ուսումնասիրություն :

Գրականության ցանկ

https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf

https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.html

Դասապլան 1.

Ուսուցիչ՝ Լիլիթ Բաղալյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	Կիսամյակ	2-րդ	Դասարան	3
Թեմա՝	<<Հայկը և Բելը>>					
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք,նկարներ, պաստառ					
Դասի նպատակը՝	1.Բանավոր կապակցված խոսքի զարգացում, երևակայության, ստեղծագործական կարողությունների զարգացում 2.Վերհիշել Հայկ նահապետի մասին ունեցած գիտելիքները 3.Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը և պատասխանները ներկայացնել դասանյութի բառապաշարը օգտագործելով					
ՈՒսուցանման արդյունքներ ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ 1.ներկայանալ Հայկ նահապետի դերում և ներկայացնել նրա մասին ունեցած տեղեկությունները , 2.կազմել կապակցված խոսք՝ ճիշտ և տեղին օգտագործելով դասանյութի բառապաշարը, 3.կատարել վերլուծություններ ու եզրահանգումներ :					
Գործողություններ (ժամ/տևողություն)	ՈՒսումնական գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ՈՒսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)		
Մուտք / 3ր/ Սկիզբ/5ր/	Աշակերտները լսում են,մտածում հարցերի շուրջ,հիշում անցածը,պատասխանում են հարցերին:Ստանձնում են Հայկ նահապետի դերն ու	Կազմակերպում է<<Արձանի/նկարի կենդանացում>> խաղը,քանի որ աշակերտները արդեն ունեն որոշակի գիտելիքներ Հայկ	Ո՞վ է պատկերված նկարում կամ ու՞մ արձան է,ի՞նչ գիտեք նրա մասին:	Մտագրոհ,դերային խաղ,հարցադրումներ,զրույց		

	խոսում նրա անունից:	նահապետի մասին: Այնուհետև Հայկի դերը ստանձնում է ուսուցիչը,նրա անունից ասում է այն,ինչը կնպաստի դասանյութի լավ ընկալմանը:		
Ընթացքը /30ր/	Կարդում են հանձնարարված նյութը,առանձնացնում են այն մտքերն ու տեղեկությունները,որոնց մասին դեռ չեն խոսել կամ չգիտեին:	Աշակերտների լուռ ընթերցումից հետո կազմակերպում է զրույց տեքստի բովանդակության շուրջ՝նախնական ընկալումը պարզելու նպատակով:	1.Ի՞նչ էր հետաքրքրում փոքրիկ Արմենին: 2.Ի՞նչ նոր բան իմացաք տեքստի առաջին ընթերցումից:	Հարցադրումներ

	Ընթերցում են հատվածաբար՝ մեկնաբանելով հատվածները և իրականացնելով բառային աշխատանք	Յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո հարցեր է առաջադրում՝ ակնկալելով բացատրություններ ու մեկնաբանություններ:		
		Կազմակերպում է զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով:	1.Ի՞նչն էր մտահոգում Արմենին: 2.Ի՞նչ եք զգում որպես Հայկի հետնորդներ:Ի՞նչ որոշակի քայլեր եք ձեռնարկելու Հայկի արժանի	

			հետնորդը կոչվելու համար:3.Ի՞նչ եք կարծում,հեշտ է հերոս լինելը:	
	Կպատկերացնեն ու դերային խաղով կներկայացնեն իրենց կողմից ստեղծված,հորինված տեքստը:	1.Կազմակերպում է տեքստի <<ընթերցանություն>>՝ ստեղծագործելով: 2.<<Ինքնուրույն աշխատանք>> պաստառի վրա փակցնում է տարամակարդակ առաջադրանքներ և առաջարկում անդրադառնալ դրանց:	Ի՞նչ զրույց է ծավալվել Հայկի և Բելի միջև մինչև ճակատամարտը:Պատկերացրեք և ներկայացրեք նրանց զրույցը:	

Ավարտ/5ր/	Ներկայացնում են ,թե ինչ աշխատանքներ իրականացրեցին,ինչ ձեռքբերումներ ունեցան աշխատանքի յուրաքանչյուր փուլում:Պատասխանում են ամփոփիչ հարցերին:	Անդրադարձ է կատարում,ամփոփում է դասանյութը:	Ի՞նչ հասկացանք,ինչու՞ են մեզ հայ անվանում,մեր երկիրը՝ Հայաստան,մեր լեզուն՝ հայերեն...	
Տնային աշխատանք 2ր	Տնային առաջադրանքի հանձնարարում			
	Դասանյութը սովորել վարժ ու սահուն կարդալ,առաջադրանք 3.			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝

Անդրադարձ

Հետազոտվող աշակերտները սկզբնական հարցերին դժվարությամբ պատասխանեցին, իսկ առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտները հարցերին պատասխանում էին լիարժեքորեն:

Դասապլան 2.

ՈՒսուցիչ՝ Լիլիթ Բաղալյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ		Կիսամյակ	2	Դասարան	3
Թեմա՝	<<Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց>>:Գործողություն ցույց տվող բառեր						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք,քարտեր,գրատախտակ,պաստառ						
Դասի նպատակը՝	1.Իմանա, թե ով է բանաստեղծության հերոսը,ինչ հերոսական արարք է կատարել: 2.Ամրապնդել բանաստեղծությունն արտահայտիչ կարդալու կարողությունը: 3.Զարգացնել բանավոր և գրավոր կապակցված խոսք կազմելու հմտությունները: 4.Զարգացնել ստեղծագործական կարողությունները:						
ՈՒսուցման արդյունքներ, որոնք կփաստեն ,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ 1.արտահայտիչ կարդալ բանաստեղծությունը, 2.մասնակցել տեքստի վերլուծության աշխատանքներին, 3.իրականացնել ինքնուրույն ստեղծագործական աշխատանք.գրել նամակ տառ-զինվորներին:						
Գործողություններ (ժամ,տևողություն)	ՈՒսումնական գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ՈՒսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			
Մուտք,ներկա-բացակա/3ր/ Սկիզբ/5ր/	Ներկայացնում են տնային աշխատանքները: Լսում են հարցերը,մտածում և պատասխանում:	Ստուգում է տնային աշխատանքները: Անդրադարձ կկատարի նախորդ դասանյութերին:		Խաղ,հարցադրումներ,նախապատրաստական զրույց			

Ընթացքը / 35ր/	Կմասնակցեն խաղին ու կփորձեն նկարագրել դասանյութի բանալի բառերը: Կատարում են բառային աշխատանք: Մտածում են ու պատասխանում հարցերին: Ընթերցում են տեքստը բարձրաձայն ու մեկնաբանություններ են անում;	Կկազմակերպի խաղ,որի միջոցով կծանոթացնի նոր հերոսի հետ: Մինչև տեքստի ընթերցումը կազմակերպում է բառային աշխատանք,տեքստի ընկալումն ապահովելու նպատակով: Արտահայտիչ ընթերցում է բանաստեղծությունը,այնուհետև զրույց է կազմակերպում տեքստի բովանդակության շուրջ՝նախնական ընկալումն պարզելու նպատակով: Կկազմակերպի	1.Ի՞նչ հույզեր առաջացրեց բանաստեղծությունը ձեր մեջ: 2.Ինչի՞ հետ է Հովհաննես Ծիրազը համեմատել հայոց այբուբենը: 1.Ինչպե՞ս եք հասկանում <<Ցրվեց հայը,բայց չձուլվեց...>> նախադասությունը:Ինչ է նշանակում <<ցրվել>> բառը այդտեղ: 2.Ինչու՞ է հեղինակը թե՛ հայերին,թե՛ Մասիսը համարում գերի: 3.Ինչու՞ է հեղինակը փառաբանում Մաշտոցին:	<<Զրույց հեղինակի հետ>> հնար

		զրույց՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով	1.Ինչու՞ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը:Տեքստի ո՞ր տողերից ու բառերից եք դա հասկանում: 2.Ինչու՞ է հեղինակն այբուբենը Հայկյան բանակ անվանում:Ինչպե՞ս կարող է տառը անմահ զինվորի պես պահպանել հայ ազգը: 3.Ի՞նչ բառերով կբնութագրեք Մաշտոցին:Այդ բառերը գրեք շողերի վրա: 4.Ինչու՞ է հեղինակը Մաշտոցին արքա անվանում:	
Ավարտ /5/	Կպատասխանեն հարցերին,այնուհետև կսկսեն արտահայտիչ ընթերցել տեքստը:Ընթերցումից հետո կկատարեն առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար: Կպատասխանեն ամփոփիչ հարցերին:	Գործողություն ցույց տվող բառերի վերաբերյալ կհանձնարարի կատարել առաջադրանքներ: Կհանձնարարի գրել փոքրիկ նամակ տառ-զինվորներին:	1.Ինչու՞ հայը ցրվեց,բայց	

		Կբաժանի ելքի քարտեր,որտեղ կան ամփոփիչ հարցեր:	չձուլվեց: 2.Ո՞վ պահեց հայ ազգը մեծ: 3.Ո՞վ ստեղծեց գրերը հայոց:	

Տնային աշխատանք	Տնային աշխատանքի հանձնարարում;
2ր	Բանաստեղծությունն հանձնարարել սովորել վարժ ու արտահայտիչ կարդալ,կատարել առաջադրանք 2.

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ

Անդրադարձ

Հետազոտվող աշակերտները սկզբնական հարցերին դժվարությամբ պատասխանեցին, իսկ առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտները
հարցերին պատասխանում էին լիարժեքորեն: Անվանակոչված աշակերտները իմ հետազոտության արդյունքում ցուցաբերեցին բավարար արդյունք: Հարցադրումների միջոցով դասին ներրգրավված էին գրեթե բոլորը: